

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆր. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆր. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԿ



Գրութիւնք եւ չին տրուիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Եթէ կ'ուզե՛ք «Հայեղի» ին մէջ աղոյր երեւնալ,

Պարտիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

Դարձեալ կը խնդրենք մեր մէկ բանի բաժանորդներէն որ յարգելով իրենց խոստումը, այլ եւս հաճին յետեւալ բաժանագինները վճարել: Մինչեւ Դեկտ. վերջ չի վճարողներուն թերթերը պիտի դադրեցնենք:

ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ շաբաթ Պատրիարքարան զրկուեր է կայսերական իրաւոյ մը որ կը հրամայէ կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնը կատարել ըստ առաջնոյն:

— Հիւանդանոցի հոգաբարձութիւնը անցեալ ուրբաթ օր խմբովին այցելելով ազգին տունը, հիւրանոցի եւ պաշտօնարանի նորակառոյց շէնքին բացման արարողութիւնը կատարել են 'ի ձեռն մատրան հոգեւոր հովիւ Տ. Վարդան վարդապետ Բրօսթրօնեանի, որ դուռնակով ազգին բարերարներուն յիշատակը յիշուեր է հոգաբարձութեան ջանքերն ու աշխատութիւնները, մասնաւորապէս յիշատակելով Յակոբեան Միքայէլ էֆէնտին, որու նախաձեռնութեամբը շինուած էր նոյն շէնքը:

— «Բազմալէպոյի մէջ կը կարգանք որ Վեհափառ Հայրիկը առ ի քաջալերութիւն Տիար Կ. Բասմաճեանի Բարիկ հրատարակած «Բանասէր» հանդէսին՝ 100 մանէթ նուիրել է: Վեհափառ Հայրապետը Տ. Կ. Բասմաճեանի աշխատութեան արժանիքը գնահատելով խոստացել է նաեւ անոր դիւրութիւններ տալ եթէ իր բեռնադիտական հմտութիւնները եւրոպական քաղաքներու մէջ զարգացունելէ ետքը հաճի Հայաստան անցնիլ եւ բուն իսկ մեր հայրենի աշխարհի մէջ բեռնադիրներու հետազօտութիւններով եւ անոնց ընթերցումով ղեկավարել:

Գործնական Բաժնական մը

Ուրֆայէն կը գրեն «Արեւելք»

«Վերջերս տեղւոյս քահանաներէն մէկը պակաս ճիշդահամարութեամբ (4 ճիւղի վրայ) պակագրութիւն մը ըրած ըլլալով — թէ եւ անգիտակցաբար, ինչպէս հաստատուած է քննութեամբ, — կռահած էր որ իր անղղու շութեան համար փիլոնազրկութեան պիտի դատապարտուէր:

Ուստի — տեսակին մէջ հազուադէպ — «Գործնականութիւն» մը ցոյց տալով, այս քահանան իր մեղապարտութեան

խոստովանադիրը պատրաստած՝ օր մը կանխեց եկեղեցիին մէջ ի լուր ժողովրդեան կարգալ զայն ու «ինքնահրաւեր» անփիլոն անցնիլ կենալ աթուռին ետեւ

Այս քահանային ցցուցած այդ «ինքնատիպ» վարմունքին առթիւ՝ քիչ մը զուարճութեան համար յիշենք թէ ինք 1867ին՝ իր ուսուցչութեան ատենն ալ՝ իր «գործնականութեան» ապացոյցը տուած է՝ հետեւեալ պարագային մէջ.

Օր մը՝ իր ատենի հին թաղականներէն մէկը՝ առարկած ըլլալով թէ քահանաներուն պէս՝ ուսուցիչներուն ալ չէ վայել շուկաներու մէջ երեւալ, այն ատենի ուսուցիչներէն ինքը՝ արդելիչ հրամանէն երկու օր ետքը, նամակով մը խնդրած էր «նախանձախնդիր» թաղականէն՝ որ հաճի փոխանորդաբար շուկայէն գնել տունը զրկել բեռ մը քակոր վառելիք՝ ու չինել տալ իր փայտեայ տախտիկն կոտրած չանկալը, եայլն:

Ընթերցողները չեն ուզեր հետեւցնել թէ անշուշտ մարդուն մէջ՝ գործնականութեան բնածին ոգին՝ չի կրնար մէկէն փոխուիլ... դիրքին ու պաշտօնին հետ:

— Հանգուցեալ Պալեան Սարգիս պէյի գւյքերուն մէջ, որոնք մահչաղը ժառանգելով տէրութեան կողմէն աճուրդի դրուեցան, Այվազովսքիի վերձինէն ելած 6 ծովանկարներ կան եղեր. որոնց ամեն մէկը քանի մը հարիւր լիրա կարժէ եղեր:

Հանգուցելոյն Պէչիկթաշի մէջ ունեցած 6—700 ոսկինոց մէկ գետինը մեր Պատրիարքարանի Մայր—Եկեղեցիի վարդապետին բաժին ինկած է:

— Անցեալ շաբաթ իրիկուն Հոմ Սքուլի վարժարանին հայ աշակերտուհիները ի նպաստ գաւառացի որբուհիի մը կրթութեան ձեռնարկին, նուազահանդէս մը տուեր են նոյն վարժարանի

սրահին մէջ. Արդիւնքը բաւական գոհացուցիչ է եղեր:

— Պատրիարքարանի Ա. գործակատարը երկուշաբթի օրը Ատլիէի պաշտոնատունը տարեր է խառն ժողովոյ վերջին նիստին որոշման համաձայն պատրաստուած Թագրիլը՝ ի մասին կիւրյ կաթողիկոսական ընտրութեան:

— Պատրիարքական հրամանաւ հումլայի եկեղեցիին Աւագերէց կարգուած է տեղւոյն քահանաներէն Տ. Խորէն քահանայ Բիւշիւքեան:

Ֆիլիպէն կը գրեն դեկտ. 7 թուականաւ:

«Գանդատները սկսան պտտիլ վարժարանին շուրջը:

«Ասկէ 15 օր առաջ Պ. Տնօրէնը աշակերտներէն մէկը ծեծած էր. Մանկապարտիզպանուհի օրիորդն ալ պղտիկներէն մին տղայի մէջ բանտարկած էր. տղան քանի մը օր հիւանդ պառկեցաւ: 3—4 օր առաջ ալ դարձեալ Պ. Տնօրէնը տղայ մը կը ծեծէ և կից կը վարնէ աշակերտներուն ներկայութեանը, տղոց հայրերը բարկացած դատարանի պիտի դիմէին, բայց անուշի կապեցին»:

Պուկարիոյ Եղեմոսֆը

Վիէննայի Լանտէր-Պանքի ընդհանուր տնօրէն Պ. Էտուարտ Բալմէր օր Բարիզ գացած էր Պուկարիոյ ելեմուտքին վերաբերեալ բանակցութեանց մասնակցելու համար, անցեալ երկուշաբթի Վիէննա դարձեր է: Բանակցութիւնները, որոնք տախաւին աւարտած չեն, երկու գլխաւոր առարկայի վրայ կը կատարուին: Ա. Սեզանտուորական խմբակը հարիւրին հինգ տոկոսով 25 միլիոն ֆր. փոխ պիտի տայ Պուկարիոյ, դանձային տոմսե-

րու միջոցաւ որոնք Բարիզի մէջ շրջաբերութեան պիտի հանուին: Բ. Յունվարի կտրոնին վճարմանը համար 4 միլիոն ֆր. փոխ պիտի տայ, որուն փոխարէն Պուլկարիա իբրեւ աւանդ պիտի յանձնէ Պուլկարական Ռանթի արժէթուղթեր: Բանակցութիւնները մօտերս պիտի վերսկսին Բարիզի մէջ:

— Սոփիայի լրագիրները կըսեն թէ պահանջուեր է դատաստանի ենթարկել հանրագումար շինութեանց նախորդ նախարար Պ. Մաճարովը, ամբաստանելով որ նաւահանգիստ մը շինելու առթիւ 14 միլիոն ֆր. զնաւ մը հոսուցած է Պուլկարիոյ:

ԱԶԳԱՅԻՆ



ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ԽՆԴԻՐԸ

Ֆիլիպէ 4 Դիկտ. 99

Հայ ազգը իր անցեալ փառաց ու պերճութեանց իբր կենդանի վկայ ունի այսօր միայն եկեղեցի մը, որ իր դարաւոր գերութեան մէջ եղած է միակ կապն ազգային գոյութեան: Սա այնչափ բացորոշ և անհերքելի ճշմարտութիւն մ'է, զոր ոչ ոք կարող է ուրանալ, և որոյ մասին հարկ չկայ փաստելու և բացատրութեանց դիմելու:

Քանի չէ ծածանած հայկական դրօշը, եկեղեցին ազգին փարախը և անոր գոյութեան պատճառը լինելէ չէ դադրած երբէք:

Սիրենք մեր հերոսները, յարգենք նոցա յիշատակը, բայց միևնոյն ժամանակ եկեղեցւոյ Ս. Օրինաց դէմ ալ զեղծում չի գործենք:

Ես չեմ ըսեր ոմանց պէս թէ անձի մը պատկերը եկեղեցին կը պղծէ, ո՛չ. այլ սա-կայն բանի որ եկեղեցւոյ սրէնքը չի տրա-

մադրեր այդ տեսակ բան մը, պէտք չէ գործել, կրօնքը յարգած ըլլալու համար:

Ինչ որ կ'ուզեն թող ըսեն մեր «ինտէլիգենտ» ազատամիտ պարոնները, կ'ուզեն տիրացու գոչեն զմեզ, կ'ուզեն կրօնամոլ, և եւթէ ինչ որ կ'ուզեն թող գոչեն. հոգ չէ: Մեր սոյն տողերը արդէն ամեն ճշմարիտ և լուրջ Հայ կը հասկնայ և կը գնահատէ:

Երբ Արամեանի համար հոգեհանգստեան պաշտօն կը կատարուէր, հոն թերեւ և ոչ մէկ Լուսաւորչական հայու մաքէն անցաւ սրբազան օրինաց դէմ՝ շարժելու, երբ յանկարծ մոլեռանգ Պապագաւան մը, որոյ միակ սկզբունքն է «Արտաբոյ Հովմայ եկեղեցւոյ չիք փրկութիւնը», հանեց գրպանէն հանգուցիլոյն լուսանկարը և զետեղեց ծաղիկէ պսակին մէջ:

Սոյն պարոնը որ կրօնական խնդրոց խորապէս հմուտ է, գիտնալով հանդերձ թէ իւր սոյն ձեռնարկութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ օրինաց հակառակ է, քահանային անփոյթութենէն օգտուելով ուղեց մեր սրբազան օրինաց հետ խաղալու: Չէ՞ մի որ Պապին հաւատարիմ և խոնարհ ծառաներուն համար Ս. Պետրոսի հաստատած եկեղեցիէն զատ միւս բոլոր եկեղեցիները երբէք նշանակութիւն ու կարեւորութիւն չունին:

Սերեմն ինչո՞ւ համար օտարին պեղած փոսը ինքեմբ անխոհեմաբար և անոր հաճոյք պատճառներ: Մեր պաշտելի և անմահ Նարդէյ Սրբազանի սա տողերը միշտ յիշելու ենք.

«Ո՛չ, եղբայր, ո՛չ, օտարներէն չկայ յոյս,
Մէ՛ջ աչուրներըդ դարձներ յայս յանկոյս
Օտարն ըզբեզ թէ և սիրէ հիւրաբար,
Օտարն, ա՛հ, միշտ է օտա՛ր:

ՀԱՅՈՐԴԻ

Շնորհակալութեամբ ստացանք Տիար Կ. Յ. Բաւմաջեանի հրատարակած «ԲԱՆԱՍԵՐ»-ին երրորդ հատորը. հնախօսական, պատմական և լեզուաբանական ճոխ պարունակութեամբ: Սոյն հատորը տպուած է տպագրական տառերով:

ԲՆՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԳԻՐՔԸ

ՀԵՏԱԲՐԲՐԱՇԱՐԺ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Թուշուներու ջղային գրութիւնը այն-
չափ զգայուն է որ մթնոլորտի ամենափոքր
փոփոխութիւնը կանուխէն կրնան զգալ:

Օրինակի համար, պայծառ օր մը երբ յան-
կարծ փոթորիկ մը ծագի, տարածորոր և ամոր
ըստած ծովային թռչունները արդէն ժայ-
ռերուն վրայ կը սպասեն, կը շարժին, թե-
ւերնին կը բանան ու տխուր ճիչեր կը հանեն:

Ծանրաշափը իջած չէ, բնութեան մէջ ա-
մեն բան հանդարտ, երկինքը պայծառ է,
հազիւ թէ հորիզոնին վրայ փոքրիկ սև կէտ
մը կը նշմարուի, սակայն անդին սև պետաւ-
հաւը (թէթրեղ)՝ մահուան տխուր պատգա-
մաբերը՝ արիկներու բարեկամը — որ միայն
մօտալուտ վտանգի ատեն կը տեսնուի նա-
ւերուն շուրջը — արդէն իր բոցնէն գուրս ե-
լած ու իր սրածուրիւ թեւերով ալիքները կը
բաղխէ զո՛հ մը գտնելու համար: Եւ ահա
շատ շանցնիւր երկիրը կը դողայ, ծառերը կը
շարժին, ալիքները կը փրփրին և կայծակը կը
գոռայ: Թռչունը արդէն գուշակած էր:

Անձրևի մօտելուն՝ քարածիծառները ու
ծիծեռնիկները գետնին վրայէն կը թռչին:
Կատուն թաթերը ահանջին ետին կը տանի:
Մեր պարտէզներու խայտերը (խսրինօս) տը-
խուր ձայն մը կը հանեն: Սագը կ'երթայ կու-
գայ, կը վազէ, թեւերը կը բանայ, կը թռչի,
ջուրը կը նետուի և անհանգստութեան նը-
շաններ կը ցուցնէ: Սիրամարգը անընդհատ
ճիչեր կը հանէ: Թուլթակը կը շողակրատէ:
Խայտահաւը կը թառի: Գորտը կը լռէ: Ծա-
ղիկները ծառի և ուժգին հոտ մը կուենան,
շատերն ալ կը գոցուին: Ընդհակառակն երբ
օդը գեղեցիկ է, թռչունները կը ճառագայե-
կարմրալանջը ամենաբարձր ծառերու վրայ
կերգէ: Ծիծեռնիկը մինչև ամպերը կը բարձ-
րանայ: Արտոյաները (չայրը գուշու) օդին մէջ
կը թռչտին երգելով: Ծղրեթը (ճըճը) իր
սովորական ձայնը կը հանէ: Անծեղը ծառե-
րուն վրայ կենէ: Տունկերը աւելի բաղդը հոտ
մը կը բուրեն: Ծաղիկները կը բացուին:

Եթէ անմեղուն ծաղիկ մը քնդասելով
պատին փակցնես, աղւոր օդին կը բացուի և
անձրևի ատեն կը գոցուի: Երբ սարդը իր
ոստայնը հիսելէ կը դադրի, անձրևի նշան

է, եթէ շարունակէ կամ գիշերունէ սկի-
օդը բացուելու նշան է: Երբ անձրևը կամ
գէշ օդը մօտ է, իր ոստայնին թեւերը կը
կարճեցնէ, ու մինչեւ օդին բացուելու մօտե-
նալն այսպէս կը թողու: Այս թեւերուն եր-
կայնութիւնէն կրնայ հասկցուիլ թէ որչափ
պիտի տեւէ աղէկ կամ գէշ օդը: Սարդը միշտ
իր ոստայնին փոփոխութիւնները կրնէ: Եթէ ա-
րևը մարը մտնելէն առաջ բանի, ըսել է թէ
գիշերը պայծառ պիտի ըլլայ: Անկից ելած է
սա առածը «Իրկուան սարդը գիշերուան
յոյս է»:

Անձրևի ատեն եթէ հաւերը չեն պահ-
ուիր ու իրենց սնունդը կը շարունակեն փըն-
տել, նշան է թէ ամբողջ օրը անձրևը պի-
տի տեւէ: Եթէ անձրևն սկսելուն պէս պահ-
ւելուն, նշան է թէ շատ չպիտի տեւէ:

Եթէ կաշաղկո միսմինակ կ'ենէն բոյ-
նէն, անձրևի նշան է: Եթէ հայր և մայր
միասեղ եղեն, աղւոր օդի նշան է: Երբ ա-
րևը կամ լուսինը շրջանակով մը պատած են,
երբ թանձր ու սև մառախուղ մը կը տիրէ,
ըսել է պիտի անձրևէ. իսկ եթէ պայծառ
երկնից վրայ լուսին, իրիկուան գէժ ծիածան,
սպիտակ մշուշներ, կարմիր ամպեր ըլլան,
գգդեցիկ օդի նշաններ են:

Չմեռը՝ եթէ երկինք կապոյտ է եւ աստ-
ղերը փայլուն, անընդհատ գեղեցիկ օրերու
ապահով նշան է: Ամառը՝ աղւոր օդին միշտ
մշուշ մը կայ որ երկնային կամարը քիչ մը
կը մթնցնէ:

Գարձեալ, ձմեռն եթէ երկինք պայծառ
է, եթէ սպիտակ գոյն մը պզնու, եթէ աստ-
ղերը նսեմին, հետեւեալ օրուան անձրևի նը-
շան է: Եթէ լուսնի նորնալէն երեք չորս օր
վերջը մաքուր և փայլուն է լուսինը, նշան է
թէ գեղեցիկ օդը պիտի տեւէ:

Աւասիկ ինչ որ կը սովորեցնէ մեզի Բը-
նութեան մեծ գիրքը:

Եթէ լուսնի երկրորդ կամ երրորդ օրը
մահիկին եղջիւրին ծայրերը բթացած են,
մօտալուտ անձրևի նշան է: Եթէ լուսնի ըս-
կառաւակը շատ կարմիր է, գէշ օդի ստոյգ
նշան մըն է:

Առաջին բառարկին եթէ առանց սեւ բի-
ծերու եւ կարմիր շրջանակի երեւի, աղւոր
օդի նշան է: Իսկ ընդհակառակն եթէ սկա-
ւառակին մէջ քանի մը սեւ արատներ, ու
բոլորտին ալ երկու երեք ու է թանձր
շրջանակն, առաջին, շուրջ պիտի անձրևէ,

գէշ օդ, կարկուտ, հով և փոթորիկ պիտի ընէ:

Հիմա աղէկ դիտեցէք. ահա զիւրին և շահաւէտ ուսումնասիրութիւն մը, որով ամեն մարդ կրնայ գուշակ մը ըլլալ եւ ապահով կերպով աղէկ կամ գէշ օդը մարգարէանալ, Խաղաղ.

Գ. Խ.

ԶԱՆԱԶԱՆՔ



Կանանց հին աւետիկ պշրասիրութիւնը. — Աշխարհի ստեղծումէն մինչեւ այսօր. 6,000 տարուան ենթադրեալ շրջանին մէջ, ամեն բան փոխուած է, բայց կանացի պշրասիրութիւնը բնաւ փոխուած չէ:

Պ. Կայէ, Մէմփիսի եւ Թէփէի մէջտեղը գտնուած Անթինօէ քաղաքին եգիպտական մեհեանի մը մէջ պեղումներ ընել տալով, շատ հետաքրքրական բաներ երեւան հանած է: Տիկիւններ, կ'ուզէ՞ք հասկնալ թէ ի՞նչ կը հագնէր պնուական տիկին մը Անթինօէի մէջ, մէկ քանի հազար տարի առաջ: Խիստ նուրբ գլխանէ շապիկ մը, վրան կապոյտ ու լոռիկներ ու ձերմակ ծաղիկներ սփռուած: Նկարատիպ գեղին ֆրոնթոնէ ոսպա մը քառակուսի բացուած, բառակուսին բոլորաթիւն ալ կապոյտ կաշուներով, զեղին նկարներով, կուրծքին վրայ ցանքիչներ, ուսպալին քղանցքն ալ ոսկեհոն մեհալիօններով: Կարմիր մետաքսեայ կրկնոց, վիզին շուրջը ձերմակ: Կարմիր գծաւոր գդակ, կարմիր կաշիէ կօշիկ, ոսկեզօծ կոճակներով:

Նոյն քաղաքին մէջ (Անթինօ) երկու ամպոններ գտնուած են իրենց հիծած թամբերով: Հագուստներն բարակ կիսամերկ կրկնոց մըն է, վուշէ բրքմագոյն ոսպա, գծուոր եւ վուշեայ շապիկ մը. պեժ գոյնով մետաքսէ ժապաւէնով գդակ մը եւ ոսկեծամուկ կաշիէ կօշիկներ:

Չմոռնանք ըսել նաեւ թէ բոլոր այս հագուստները անվթար միացած են մինչեւ հիմա:

— Համբոյրներու աճուրդ մը կատարուել է լոնտոնի «Բէլէս Թէաթր» թատրոնին մէջ, Հարաւ-Ափրիկեան պատերազմին զոհ գացող զինուորներու այրիներուն եւ որբերուն ի նպաստ: Անգլիական թերթերը կը յիշեն բարձրագոյն գիներէն մէկ քանին. Միս Մապէլի մէկ համբոյրը՝ 5 ոսկի, Միս Բէթի մէկ համբոյրը 4 ոսկի, եւ այսպէս շարունակաբար: Այս «բարեգործական» երեկոյթին մէջ արական սեռին արժանապատուութիւնն ալ յարգելու համար, ներկայացման վերջին պահուն մանկամարդ անգլուհի մը 5 ոսկի նուիրել է՝ հանգէսին կարգադիր մասնախումբէն անդամներէն մէկէն համբոյր մը առնելու համար:

— Անուանութիւններ այս տարի յարաճուն կերպով բազմացած են Բեդերսպուրիի մէջ: Նոյեմբերի առաջին շաբթուն, հարսանեկան այնքան շատ հանգէս կայ եղեր, որ հարսնեւոր չեղող սովորական մահկանացունքը կառք չին գտեր: Պսակուելու դացող ամուսնեւոր ամէն տարիք կը ներկայացնեն եղեր, տասնըփեցէն մինչեւ. . . եօթանասունընեօթը:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ժամացոյց — Կեանքին խարտոցը.
Իմաստակ — Աղաւաղումն իմաստուն բառին.
Իրաւ — Սուտ.
Լիրբ — Գործունեայ.
Խաբէբայ — Ճարպիկ.
Խրատ — Գեղ մը որ աղանջով կը խմուի.
Ծափահարութիւն — Չեւքերու կեցցեն.
Դերութիւն — Կեանքի կատակերգութեան վերջին արարուածը.

Կանխիկ — Ստա՛կ ոչ. — Շնորհակալութիւն. — Ընդունեցէք, առէ՛ք որքան որ կ'ուզէք:

Հայհոյութիւն — Փաստի սով.
Համարատու — Այն որ հաշիւ չի տար.
Ճամարտակութիւն — Նոր եւ գիւրին արհեստ մը ստակ վաստկելու:

Մամոնա — Անիրա՛ւ քեզի:
Մարմին — Բժիշկներու ստացուածք:

Միջնորդ — Երրորդ մը որ միշտ կը շահի:
Յամահութիւն — Որքան դժուար է սը-
խալը խոստովանելը:

Նուաստութիւն — Մի ինչ որ դեղահաստ
անմարսելի:

Շահ — Մեզ շարժող շողին:

Շուկայ — Սուտերու գործարան:

Չարութիւն — Բարութեան վրայ կը հողովի:

Պանիր — Սեղանին վերջաբանը:

Պատրուակ — Պատճառին կեղծը:

Սարկաւագ — Ամէն օր մտքէն անցնող թէ
հրնայ օր մը կաթողիկոս ըլլալ:

Վարժապետ — Տես ողորմելի:

Վկայ — Գործ չունիս նէ նշիր:

Յուրտ — Ածուխի ու փայտի թշնամին:

Փեսայ — Կըսեն թէ ազէկը հազուադէպ է:

Փոխանու

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

Աժանս Բոժոժիկ և Ընկ.

Լոնտոն

Գաղթային նախարարը ստամոքսի
հիւանդութեամբ սկսաւ տառապիլ, Պո-
էրական պօրանիին իր կարծածին չափ
դիւրամարս չըլլալուն պատճառաւ:

Աղէքսանդրիա

Սուտանը նուտճող Լորտ Զօրավարը
չուզեր կոր Խրանսլալ երթալ, բերնին
համը չի փախցնելու համար:

Քէթաուս

«Հինգ օրէն Պօէրները մեր ձեռ-
քին մէջ պիտի ըլլան» ըսող Չէմպէրլի
մարգարէն հոս զրկեցէք որ աս թու-
թուլմազ գաբըլմազ չարաճճիներուն
խօսք հոսկցնէ, վասնզի ասոնք ձեր զըր-
կած անտուկներով չօգօլաները ու տա-
կառներով գարեջուրերը քիթէ բերնէ
կը բերեն կոր:

Մատրիտ

Մատամ Իզապէլա հետեւեալ հեռա-
դիրը քաշեց մատամ Վիթթօրին,

«Մեծ կեր, բայց մեծ մի՛ խօսիր, քու-
րիկս»:

Ռիօ Եան'յրօ

Պուլվար տը Գաբաեուտա

Կարծեցեալ յեղափոխական մը վեց
ամիսէ ի վեր իր բնակած սենեկին վարձ-
քը չէ վճարած իր լայն մարդասիրու-
թեամբը, առարկելով թէ ինքը յեղա-
փոխական կուսակցութեան մը անդամ-
ներէն ըլլալով, կը ուղարկէ կոր Եւրոպա-
յէն... չեկող ամուսնական իւրն զըր-
կուելիք աջաշիջին, որպէս զի այդ դը-
րամով տանտիկնոջ պարտքը տայ: Խեղճ
կինը այդ դրամին գալուն ի զուր սպա-
սելէ վերջը հիմա ստիպուեր է փայտի
տեղ եգիպտացորէնի կոյան վառել սօ-
պային մէջ, առաւ սուլասիոյ:

Ղանուր

Տակաւին երկու շաբաթ առաջ թա-
տերաբեմին վրայ Ա. դիւցազնուհիի գե-
րը կատարող բրիմաուօնա մը այսօր Ա.
ընտանիքին խօլթուիլը յաղորձիութիւն ը-
նել ու ձեռքը ունեցած քարեհովը Քար-
աւ ժողուել սկսաւ:

Ծ Ի Ծ Ա Ղ

Երկու բարեկամներ Շիշթօֆի մէջ
փողոցը իրարու կը հանդիպին:

— Օ... դու ես բարեկամս, ան-
ցած ըլլայ. ալ աղէկ մը առողջացաք,
այնպէս չէ:

— Այո՛, սիրելի բարեկամս:

— Ինչ մեղք, պահեմ. անկողնոյդ
մէջ որ զբեղ տեսայ, անյոյս վիճակ մը
ունէիր:

— Այնպէս էր, բայց հոգեդարձ ե-
ղայ:

— Ի՞նչպէս եղաւ որ...

— Առողջութիւնս դիպուածի մը կը
պարտիմ, զիս դարմանող տօքթօրը...
մեռաւ:



ԽԵՆԴԵՐՈՒՆ ԲԺԻՇԿԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷՆ ԸՐԱՐ

(Շարունակորիսն)

Մէր. — Կեցիր, մի միայն սա ընէ՛.
երկուքէս որո՞ւն ձեռքը կապուած էր:
Մարի. — Միտքս չէ պարոն, ես ցըն-
ւած եմ.

Մէր. — Միտքդ չէ՞ մի, քեզի թըշ-
ուառական քեզի:

Մարի. — Քանի որ կը փափաքես՝
ուրեմն, միւսին համար անանկ թող ըլ-
լայ (մեկնի)

Մէր. — Անդին կորսուէ՛ աչքիս առ-
ջէն ցնդած չըլլիստի.

Ֆրա. — Հանգարա եղած ատենը հօր-
եղբօրս խօսքերը մտիկ կըլլուն, բայց
հիմա . . .

Մէր. — Ո՛վ Աստուած իմ հիմա իրաւ
պիտի թուցնեմ.

Ֆրա. — Ահ տէր բժիշկ հօրեղբօրս
այս վիճակը տեսնելով խիստ կը ցաւիմ
վրան, բայց սա ալ գիտեմ թէ դուք
հիւանդներնիդ զաւկներնուդ պէս կը
հոգաք, այս պատճառաւ ձեզի ձանձրու
թիւն չը տալու. համար կրկին կրկին ա-
ղաչելը մէկգի կը ձգեմ, Աստուծով դալ
չաթթու կուգամ ձեզի հետ նորէն տես-
նուելու:

Մէր. — Իրաւ խենդենալու բան է աս,
ես տակաւին կը կարծեմ թէ կատակ
է ըրածնին:

Ֆրա. — Շաբթու մէջ օր մը կուգամ
կը տեսնուինք:

Մէր. — (Պոռալով) Ի՞նչպէս, կերթայ
կոր. բռնեցէք տէր իմ, մի՛ թողուք.
խենդը ան է, ես խենդ չեմ, յիսալած
էք դուք:

Ֆրա. — Հանգիստ եղիր իմ սիրելի
հօրեղբայրս, հանգիստ եղիր, մի՛ վախ-
նար, զքեզ Մ. Տօթթօրին կը յանձնեմ,
Աստուծով պիտի խնամէ և խելքդ դը-
լուիլ բերէ, անհոգ եղիր և առ այժմ
մնառ բարեաւ:

Մէր. — Ֆրանսուա՛ Ֆրանսուա՛.

Ֆրա. — (Մէկէն ի մէկ) Ա՛հ,

Մէր. — Հա՛, ահա հիմա փախուց.

Բժի. — Ի՞նչ եղաք:

Մէր. — Կեցէք տէր իմ, մ'աճապա-
րէք.

Ֆրա. — Ահ տէր իմ, դուք աղջիկ մը
ունիք:

Մէր. — Իմացա՞ք ա, դուք աղջիկ մը
ունիք եղեր:

Բժի. — Այո՛ պարոն, բայց ի՞նչ ըսել
կուզէք:

Ֆրա. — Աղջիկ մը ունիք, անունն ալ
Գլէն:

Մէր. — Ահա հիմա կատարելապէս
փախուց:

Բժի. — Այո, անունը Գլէն է.

Ֆրա. — Երեք ամիս առաջ հօրաքը-
րովը հետ էմոյ տաք աղբիւրները գա-
ցած էր, այնպէս չէ:

Մէր. — Հաղար ապրիս, կեցցես. ի՞նչ
աղէկ ժամանակին խենդութիւնը բըռ-
նեց:

Բժի. — Այո՛ պարոն, այս ամառ աղ-
ջիկ էմոյ ջուրերն էր.

Մէր. — Աս ի՞նչ է, դուք տլ մի փա-
խուցիք Պ. Տօթթօր. հիմա հասկցայ թէ
դուք բժիշկ չէք: այլ այս տունը եկող
խենդերէն մէկն էք. կը զարմանամ
թէ ի՞նչպէս կըլլայ որ ասոր պէս խեն-
դերը հանգիստ կը թողուն:

Բժի. — Մտիկ ըրէ ինձ բարեկամ,
թէ որ խելօք չի կենաս՝ զքեզ պաղ ջու-
րին պանեօն կը խօթեմ:

Մէր. — (Ետ բաշուկով) Ան չէ ամա,
իրաւ աս մարդը վտանգաւոր խենդ մ'է
եղեր:

Բժի. — Շարունակեցէք խօսքերնիդ
կաղաչեմ.

Ֆրա. — Գիտցիք ուրեմն տէր բժիշկ,
թէ ձեր աղջիկը կաթոգին կը սիրեմ, և
անանկ կը կարծեմ թէ ինքն ալ փո-
խադարձաբար զիս կ'սիրէ՝ եթէ միտ-
քը փոխած չէ, հրաման տուէք ինձ որ

զայն ինձ կնութեան առնելու համար
ձեզի աղաչեմ:

Բժի. — Ըսել է որ Մ. Ֆրանսուա Մէր-
լոն դուք էք:

Մէր. — Հէ՛. ի՞նչ կըսէ, եղբորորդիս
կը ճանչնայ եղեր:

Ֆրա. — Այո տէր իմ, ուրեմն ամե-
նէն առաջ անունս իմացնելու էի ձեզ:

Մէր. — Ի՞նչ ըսաւ, ի՞նչ ըսաւ:

Բժի. — Ներեցէք Պ. Ֆրանսուա, գի-
տէք թէ զմեզ որչա՞փ սպասեցուցիք:

Մէր. — Անո՞ր կսպասեն կոր եղեր:

Ֆրա. — Ըսել է որ ինծի կսպասէիք:

Մէր. — Է՛, ասոր վերջը ո՞ւր պիտի եր-
թայ:

Բժի. — Պարոն, օրիորդ Գլէն, իմ աղ-
ջիկս ամեն բան պատմեց ինծի:

Ֆրա. — Ըսել է որ զիս կը սիրէ:

Բժի. — Կը հարցնե՞ս, միշտ ձեր վը-
րայ կը խօսի:

Մէր. — Կը սիրէ եղեր մի՛, ալ համ-
բերութիւնս հասաւ:

Ֆրա. Բայց հիմա ո՞ւր է օրիորդը:

Մէր. Իրաւ օրիորդը ո՞ւր է, սլշիկայ
ինծի ցուցուցէք որ իրեն պզտիկ սիրու-
նիկ քօթօթ մը ընծայեմ:

Բժի. — Հիմա՝ Գլէն Գլէն:

Մէր. — Ահա եկաւ:

Գլէ. — (Ներսէն) Ի՞նչ կը հրամայէք
հայր իմ, ահա եկայ:

Ֆրա. — Ահ, ինքն է:

ՏԵՍԻԼ 2.

Նոյնք և Գլէն

Գլէ. — Մեծդ Աստուած, Պ. Ֆրան-
սուա Մէրլոն հո՞ս, ա՛հ տէր իմ:

Բժի. — Տակն ու վրայ եղան:

Մէր. — Ի՞նչ կըլլան կոր:

Բժի. — Ի՞նչ պիտի ըլլան, ուրախու-
թիւն երջանկութիւն:

(Շար.)

Մ. 2.

ՀՈՎԱՍՈՒՆ

Սիրուն բանաստեղծութեանց հա-
տիրիկ մըն է, ընթերցանութեան ար-
ժանի, որ կրնայ կազանդի առթիւ ալ
իւրր նուէր արուիլ: Գիտն է 25 սանդիմ.
Հատ առնողներու համար չափաւոր զեղջ
Դիմել Զարպհանէլեան գրատուն վառնա

ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ԴԱՍ

Ողջ տիեզերական լեզուի հմտութիւնը
գրեթէ անհրաժեշտ է ամէն ազգի անհատ-
ներու, անոր օգտակարութիւնը հաշակելը.
աւելորդ է, Դիւրուսոյց մէթոտ. ժամը 90
սանթիմ: Առջին դասը ձրի է: Դիմել Արամ
Մասնահանի

Ով որ կը փափագի ունենալ ար-
տասահմանի մէջ հրատարակուած թեր-
թերու հաւաքածոներ, թող գիմէ վառ-
նա Զարպհանէլեան գրատունը, ուր կը
գտնուին նաեւ 1900ի ամեն տեսակ օ-
րացոյցներ, Պուլկարերէնը սովորեցնող
գիրք մըն ալ կը ծախուի դին 7 ուկէս
շրուշ

ՓԱՓԱՆԱՇԱԿՆԵՐՈՒՆ

Յատկապէս խնամօք պատրաստուած ըն-
տիր երչիկ եւ ապուխտ. կը ծախուի վառ-
նա Մուսալլա, Տ. Ռափայէլ Գարապաշեանի
նպարեղինաց վաճառուներ: Գին գոհացու-
ցիչ: Քաղաքներէ ու արտասահմանէ եկած
յանձնարարութիւնք ալ փութով կը կատար-
ուին:

Отговорникъ М. Сконовъ
Печальница „Взаимность“ — Варна.